

# ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԻՐԱԼԻՈՒՆՔԸ

## ԸՍՏ ՌՈՒՍԱՑ ՕՐԵՆՍԴՐՈՒԹԵԱՆ

ՄԻՔ. ԱԹԱԲԵԳԵԱՆԻ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Իրաւաբանութեանը հեղաքբքրող մի շաբք հարցերի մէջ վիճաբանութեան առանձին նիւթ է դալիս հեղինակի իրաւունքի իրաւաբանական բնաւորութիւնը։ Հեղինակի իրաւունքը, իբրև արդիւնք հասարակութեան նոր պայմանների, թէև իրաւունքի պարմութեան մէջ հանդէս է գալիս համեմատաբար նոր ժամանակում, սակայն արդէն ընդարձակ գրականութիւն է առաջ բերել քաղաքակրթւած պետութիւնների մէջ։

Մեզ գրաղեցնոլ հարցի վերաբերմամբ լուս տեսած բազմաթիւ հերազօնութիւններին նայելով՝ հեղինակի իրաւունքի մասին այս կամ այն կարծիքն արգայացազող գիտնական-գրողները որոշ խմբերի ևն բաժանուում։ Դիպնականների մի խումբը բոլորովին հերքում է գրական սեպհականութեան գոյութիւնը և հեղինակի իրաւունքը հիմում է արգոնութիւնների վրայ. մի ուրիշ խումբ հեղինակի իրաւունքը համարում ոչ թէ սեպհականութիւն, այլ գոյքի (ԱՄԿ-ացիոնական) իրաւունք. երբորդ խումբը հեղինակի իրաւունքին վերաբերուում է իբրև անձնաւորութեան իրաւունքի. ուրիշներ հեղինակի իրաւունքն ընդունում են իրեւ սեպհականութեան իրաւունք և այլն։

Նայելով՝ թէ ինչ գեսակէտից են վերաբերուում խնդրին և ինչ հասպարութեան հետ են նոյնացնում՝ հեղինակի իրաւունքը,

Դրա համեմատ էլ նրանց վերադրում՝ են այն բոլոր յափկութիւններն ու հետեանքները, որոնք յափուկ են համապատասխան հասպարութեան:

Կան մի շարք գրողներ էլ, որոնք աշխափում են հեղինակի իրաւունքի մէջ գունել ինքնուրոյն բնաւորութիւն կրող մի հասպափութիւն (ինսփիպուտ), որ տարբերում է քաղաքացիական իրաւունքի հասպափութիւնների բնաւորութիւնից:

Հեղինակի իրաւունքը իր պարմական զարգացման լնթացքում անցել է մի քանի շրջաններ, որի միջոցին նրան իբրև սկզբնական հիմք ծառայել է ինչպէս հին աշխարհին, նոյնպէս միջին դարերին անձանօթ հրապարակչական իրաւունքը: Միայն գիտութիւնների և արւեստների վերածնութեան շրջանից (15 և 16-րդ դարերից) սկսած, վերածնութեան, որ շուրջով փայլեց Երոսլավի հորիզոնի վրայ տպագրութեան գիւղից յերոյ, —երկում են գրական երկերի սեպհականութիւնների պահպանութեան առաջին նշանները: Խսկ այդպիսի սեպհականութիւնների համարում էին դասական (կլասիկ) երկասիրութիւնների հրապարակիչները, երկասիրութիւնների, որոնց հեղինակները արդէն վաղուց յաւիրենականութեան էին իջել և, հետեւաբար, չէր կարող խօսք լինել հեղինակի իրաւունքի կամ նրա որև է պահանջի մասին: Մի կողմից այն հիման վրայ, որ գրքերի տպագրութիւնը ենթադրում է որոշ նախնական ծախսեր, որոնք կարող են եր սրացւել միայն ապագայում, երբ այդ գրքերը կ'ուարածեն, միւս կողմից այն, որ՝ գրքերի մէջ պահանջի պատճառով՝ զանազան մարդիկ ձեռնարկում են հրապարակել իրանց մօս եղած դասական հեղինակութիւնների ձեռագիրները<sup>1)</sup>—ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ հրապարակիչների շահերի պաշտպանութիւնը պէտք է ճանաչւէր իբրև անհրաժեշտ և արդար միջոց նրանց նիւթական շահերը ապահովելու համար: Եւ ահա ԽՎ դարի վերջում արևմտեան Եւրոպայում հրապարակիչների համար բացւում է արտօնութիւնների շրջանը: Բայց հրապարակիչների առյն բացախիկ արտօնութիւնները երկար չպետքին և պէտք է դեղի դասին երկերի հեղինակների՝ իբրև նրանց սրեղծագործողների:

<sup>1)</sup> Шершненевичъ, Авторское право.

աւելի զօրեղ իրաւունքի առաջ։ Տիրապերող վարդապետութիւնը հեղինակի իրաւունքը համարում է մի հաստատութիւն, որ կանոնաւորում է գրական, երաժշտական և գեղարւեստական երկերի ընդօրինակումներով արդարապելու և բարածելու բացառիկ իրաւունքը։ Այդպէս ուրեմն, գրական սեպհականութեան իրաւունքի հիմք են ծառայում հեղինակութիւնները ընդօրինակումներով վերաբրափելու և գարածելու, այսինքն ծախքը հանելու, բոպէները։ Այս վերանորոգութիւնը գիրութեան սեպհականութիւն է դառնում ԽVIII դարի վերջում և ԽIX-ի սկզբում և անդրադառնում է նաև Արևմուգիքի օրէնսդրութիւնների մէջ իբրև հետեւանք շահերի ընդհարման, մրաւոր աշխագութեան և ջանքերի։ Եւ, յիրաւի, կեանքի նոր պայմաններն և պահանջները օրէնսդիրների մէջ միզք յլացրին կանոնաւորել հեղինակների և հասարակիչների յարաբերութիւնները, գրական երկերի հեղինակներին և նրանց ժառանգներին թոյլ տալով ժամանակաւոր կերպով օգուել այդ երկերի բերած արդիւնքից, այլ խօսքով՝ հեղինակութիւնների պապագրութիւնից և ծախելուց նիւթեական օգուտ սրանալու արգօնութիւնը սահմանափակւեց որոշ ժամանակամիջոցով՝ Յ0, Յ0 և աւելի դարիներ—զանազան ժամանակամիջոցների համար,—որի լրանալուց յերոց հեղինակութիւնները դառնում են հասարակական սեպհականութիւն։

Հեղինակի իրաւունքի ժամանակաւոր լինելու մէջ շաբ հետազոտողներ տեսնում են ժողովուրդների լայնաձաւալ լուսաւորութեան գրաւականը՝ իբրև մի միջոցի, որ հնարաւորութիւն է գոալիս էժան կերպով գրքեր ձեռք բերելու։ Այս նիւթին վերաբերեալ օրէնքը, ասում է ֆրանսիական իրաւաբան Ռէնուարը, միայն այն ժամանակ կարող է լաւ լինել, եթե ոչ հեղինակի իրաւունքն է զոհ բերում հասարակութեան իրաւունքին, ոչ էլ հասարակութեան իրաւունքը հեղինակի իրաւունքին։<sup>1</sup>

Այսպէս թէ այնպէս, առանձին պետութիւնների օրէնսդրութիւնները իրենց հովանաւորութեան դակ առան հեղինակների շահերը, սակայն սահմանափակումը բաւական չէր։ Բանն այն է որ

<sup>1</sup> Табакниковъ, Литературная собственность.

միջազգային յարաբերութիւնների զարգացմամբ, մի պետութեան սահմաններից դուրս տարւելու և տարածւելու հետ միասին պէտք զգացւեց հեղինակների փոխադարձ շահերի պաշտպանութեան, որի հետեւանքն այն եղաւ, որ առաջ եկան միջազգային զանազան դաշնակցութիւններ, ինչպէս օրինակ՝ Բէլգիայի և Ֆրանսիայի, Անգլիայի և Ամերիկայի միջև հեղինակների իրաւունքները փոխադարձապէս աղացրպաննելու վերաբերմամբ։ Այսպեղ կարելի է նկատել, որ հեղինակների իրաւունքները փոխադարձաբար ընդունելու հարցի վերաբերեալ միջազգային ամենամեծ իրողութիւնը եղաւ Բեռնի դաշնադրութիւնը 1886 թ., որին մասնակցեցին Եւրոպայի համարեա բոլոր լուսաւորւած պետութիւնները, բացի Ռուսիայից։

Ռուսական պետութիւնը, որ այնքան լայն կերպով օգրուում է գրականութեան, դիրութեան և արևեստների վերաբերեալ օգարաշխարասիրութիւններից, համարնալի է որ իր համար ձեռնուուչհամարեց Բեռնի դաշնադրութեան մասնակցութիւնը, բայց և այնպէս 1861 թ. նա էլ սրիպւած էր եղել դաշինք կապելու Ֆրանսիացիսկ յաջորդ գործին Բելգիայի հետ հեղինակների իրաւունքների փոխադարձ պաշտպանութեան համար։ Սակայն դաշնադրութիւնը ոչք ունենալու էր մինչև 25 տարի, այնպէս որ 1887 թ.-ից Ռուսիան արդէն իրեն ազար է գգում հեղինակի իրաւունքին վերաբերեալ որ և է միջազգային պարտաւորութիւնից։ Չնայելով Ռուսական պետութեան այսպիսի առանձնացած դրութեանը այդ խընդիրի մէջ, բայց և այնպէս պէտք է ենթադրել, որ հեղինակի իրաւունքի ասրիճանական դուրգացումն ու միաւորումը, հաւանորէն առաջ կը բերեն մի ընդհանուր օրէնք այդ հարցի մասին բոլոր քաղաքակրթւած պետութիւնների համար։ Այս խնդիրը պրոֆ։ Ներշնեկիչի կարծիքով, աւելի ևս հնարաւոր է այն պարագառով, որ հեղինակի իրաւունքի հասպասութիւնը նոյնքան քիչ է կապւած մի երկրի սովորութիւնների, բարքերի և նախապաշարմունքների հետ, որքան և ինքը միտքը, որ կեանք է տալիս դիրութեան և արևեստների վերաբերեալ երկերին։<sup>1</sup>

Սոյն ներածութեան մէջ մենք միտք չենք ունեցել ներկայա-

<sup>1</sup> Шершеневичъ. Авторское право.

ցնել հեղինակի իրաւունքի գարգացման կարարելապէս ամբողջացրած պափկերը. մեր նպատակն է եղել լոկ ընդհանուր կերպով գծել հեղինակի իրաւունքի յառաջընթաց շարժման պարմութեան դիմաւոր կէտերը, միաժամանակ մէջ բերելով և մեզ հետաքրքրով հարցին վերաբերեալ լուսաւորւած պետութիւնների յայրնած ընդհանուր դրութիւնները: Յետպահայ շարունակութեան մէջ մենք կ'աշխատենք մի պարմական, համեմապարար մանրամասն, հայեացք ձգել հեղինակի իրաւունքի վրայ Ռուսիայում, միայն սկսելով Պետրոս Տեծի թագաւորութիւնից, որովհետեւ Խուսական պետութեան նախընթաց պարմութիւնը ոչ մի հետաքրքրութիւն չի ներկայացնում հեղինակի իրաւունքի հարցի նկարմամբ:

Պետրոս Մեծի թագաւորութեան լուսաւորով շրաջանը հոչակւած է այնպիսի շէպքերով, որոնք պէտք է արագացնէին հեղինակի իրաւունքի գաղափարի վերահաս ծնունդը ոռւս հասարակութեան մէջ: Պետրոս Մեծը քաջալերում էր տպագրութեան գործը, նպաստում էր տպարանների զարգացմանը և օպար գրականութեան երկերի թարգմանաբար լոյս տեսնելուն. նա հիմնեց առաջին ոռւս լրագիրը, մրցրեց նոր բաղաքացիական տառեր (փոխանակ սլաւոնական տառերի): Օռւս հասարակութեան մէջ դեռ մեծ պահանջ չէր զգացւում գրականութեան և սրա հետ կապւած հիմնարկութիւնների, ինչպէս օրինակ տպարանների վերաբերմամբ. հրատարակչական գործը սպահանւում էր բացառապէս կառավարութեան ձեռքով: Առաջին արտօնութիւնը, որ Պետրոս Մեծը շնորհեց Ամսուերդամցի տպարանապէր Տեսինգին, բացառիկ իրաւունք էր տպալիս վերջինիս վազպարել և Ռուսասպան բերել իր տպարաններից դուրս եկած հրատարակութիւնները, քարտէզներ, նկարներ, մաթեմատիկական և գեղարվեսդական գրքեր, պատկերներ և այլն:

Դեռ ԽVI և XVII դարերում արեւմուգում մասնաւոր անձերի, հրատարակիչների զգացած պահանջը—արդօնութիւններ ձեռք բերել իրենց հրատարակութիւնները կողմնակի արդարապութիւնների դէմ պաշտպանելու համար—մինչեւ իսկ XVIII դարում Ռուսիայի մէջ նպաստաւոր հող չգուաւ իւր համար. Ռուս հասարակութիւնը դեռ

պատրաստւած չէր ըմբռնելու մի այդպիսի նորութիւն։ Նշանաւոր է այն երկողթը, որ Խուսասպանում հեղինակի իրաւունքի առաջին արգօնութիւնները ձեռք բերին ոչ թէ ֆիզիկական, այլ իրաւաբանական անձնաւորութիւնները, այն է՝ Գիրութիւնների Ակադեմիան և ապա ժողովրդական դպրոցների յանձնաժողովը։ Գիրութիւնների Ակադեմիան իրաւունք սփացաւ դպագրել և ծախսել հասցեների և քաղաքական, ասրարարաշխական օրացոյց, ինչպէս նաև Պետքերբուրգում լրագիր հրատարակելու իրաւունքը։ Իսկ ինչ վերաբերում է ժողովրդական դպրոցների յանձնաժողովին, դպրոցների համար գրքեր հրատարակելու բացառիկ արգօնութիւնը նրան շնորհւեց։

Գիրութիւնների Ակադեմիայի 1703 թւի կանոնադրութեան մէջ զերեղւած է այդ արգօնութեան մասին հետևեալը։ Ակայսերութեան մէջ գրնուղ բոլոր դպարաններին արգելում է արգագլուխ, առանց նրա առանձին թուլլութեան, այն գրքերը, որոնք լոյս են գեսել ակադեմիական դպարանում։ Հակառակ դէպքում նոքա պիտի զրաւեն յօդուպ Ակադեմիայի<sup>1</sup>։ Այնուհետև 1761 թ. կառավարիչ Սենատի հրամանով հիմնում է մի առանձին դպարան իրրե մաս Սենատի դպարանի, ուր դպւում են նադեորնի սովետնիկ Վոլչկովի թարգմանած գրքերը։ Դուրս է դալիս, որ մի այդպիսի գործ ձեռնարկւած էր շնորհիւ կառավարութեան առանձին հոգածութեան դէպի Վոլչկովի նիւթական վիճակը, որին այդ անհրաժեշտ էր իր չքաւորութեանը դարման անելու համար<sup>2</sup>։

Եկադերինա Ա-ի թագաւորութեան միջոցին արգօնութիւններ շնորհւեցին, 1771 թ., Խուսասպան եկած Յովհան Հարթունդին՝ Պետքերբուրգում մասնաւոր (քազար) դպարան հիմնելու համար, ուր պէտք է դպւէին միայն օգար լեզուներով գրքեր, միևնուն ժամանակ պարտաւոր լինելով դպել այնպիսի հեղինակութիւններ, որոնք շատապարտելի չէին ոչ քրիստոնէական օրէնքների, ոչ կառավարութեան և ոչ էլ բարեբարոյութեան դեսակէպից<sup>1</sup>։ Ոի քանի դպարի յեփոյ, այն է 1776 թ., նոյնպիսի արգօնութիւն շնորհւեց Վեյնբրեիսը և Ենոու դրավաճառներին։

<sup>1</sup> Շերենեվիչ, Հեղինակի իրաւունքը, էջ 122.

<sup>2</sup> Կալմըկով. Գրական սեպհականութեան մասին.

XVIII դարի վերջում երևան եկան նոր դպրաններ, մանաւանդ Պետքերբուրգում և Մոսկացում Ռուսական լուսաւորութիւնը դարձելու գործում ահազին ծառայութիւն մագուցեց առաջին ուսւ ժուռնալիսու և գրող նովիկովը:

Ալեքսանդր I-ի թագաւորութիւնը նշանաւոր է դեպի գրական գործիչները ցոյց դրած առանձին հոգափարութեամբ, որոնք ծառայողների հետ համահաւասար սպանում էին թոշակ և նշանաներ: Ի միջի այլոց, Բժշկական-Վիրաբուժական Ակադեմիան արժանացաւ կառավարութիւնից ձեռք բերելու այնպիսի արգոնութիւն, որի շնորհիւ ակադեմիկոսը, պրոֆէսորը կամ ադիւնկտը իրաւոնք ունէին իրենց ներկայացրած շարադրութեան համար վարձարութիւն սրանալու: Միևնուն առանձնաշնորհը ներմուծեց 1814 թ. նաև հոգեոր ակադեմիաների կանոնադրութեան մէջ:

Ալյոֆել պէտք է նկագել, որ Պուշկինը առաջին գրովն էր, որ մեծ եկամուտ ձեռք բերաւ իր երկասիրութիւնների հրափարակութիւնից. ցուցում կայ, որ Պուշկինը կառավարութիւնից 20,000 ռուբլի թուղթ փող սրացաւ իր «Պուդաչովի» խոռվութեան պարմութիւնը գրւածքի համար:

Այսպէս թէ այնպէս, ոռուսական ինքնուրոյն գրականութեան ծնունդ առնելը և ոռուսաց հասարակութեան հոգեոր պահանջների ասորինական զարգացումը օրէնսդրութեան մէջ առաջացրին այն միգը, թէ հարկաւոր է կանոնաւորել հրափարակիչների յարաբերութիւնները և գլխաւորապէս պարզել հեղինակների իրաւաբանական դրութիւնը: Սրա հեգեւանքն այն եղաւ, որ 1828 թ. ապրիլի 22-ին հանդէս եկան գրաքննական կանոնադրութիւնը և սրան իրեւ յաւելւած՝ հեղինակների մասին կարգադրութիւնը:

Թէև 1828 թ-ի օրէնքը հեղինակի իրաւոնքի նկագմամբ ներկայ օրէնսդրութեան հիմք է ծառայում, այնուամենայնիւ այդ օրէնքը 1830-ին մի քանի փոփոխութիւնների ենթարկւեց. այնուհետեւ օրէնքների ժողովածուի 1842 թ-ի հրափարակութեան մէջ հեղինակի իրաւոնքի վերաբերմամբ որոշումները՝ առանց փոփոխութեան՝ գեղ գտան XIV հարորի մէջ՝ իրեւ յաւելւած ոճրագործութիւնների առաջն առնելու և խափանելու մասին կանոնադրութեան 129 յօդւածի: Սակայն արդէն 1857 թ-ին հեղինակի իրա-

ւունքի ժամանակամիջոցը, հեղինակի մահից յերոյ, երկարացւեց 25-ից մինչև 50 տարի և օրէնսդրքի հրաբուրակութեան մէջ գրաքննական (ցենզուրացի) կանոնադրութիւնը XIX հարորում առանձին դեղ սփացւաւ: Մինչև 1887 թւականը գրաքննական կանոնադրութիւնը անփոփոխ մնաց և միայն այդ թւականին հեղինակի իրաւունքների մասին որոշումները գեղափոխւեցին իբրև յաւելւած X հարորի I մասի 420 յոդւածի և կազմեցին սեպհականութեան իրաւունքի մի առանձին դեսակը:

**ՍԵՐԿԱՅՈՒՄՆ** գործադրուող օրէնսդրութեան մէջ հեղինակի իրաւունքին վերաբերեալ որոշումները մի առանձին բաժին չեն կազմում, այլ գեղաւորւած են Ռուսական նայսերութեան օրէնքների ժողովածուի առանձին մասերում, այն է՝ քաղաքացիական դարավարութեան կանոնադրութեան X հարորի I մասում և պարիմների վերաբերեալ կանոնադրութեան մէջ:

**ՎԵՐՋԻՆՍ** իր մէջ բովանդակում է լոկ մի քանի յօդւածներ գիրնական և գեղարւեստական սեպհականութիւնը իրացնողներին պարասխանագուռութեան ենթարկելու ժամանակամիջոցների և համապարփառան պարիմների մասին: Իսկ ինչ վերաբերում է հեղինակի իրաւունքների էութեանը գրական երկերի նկարմամբ, այդ իրաւունքի տիրոջ (=սուբյեկտ) և առարկացի (=օբյեկտ) դրութեանը, չիշեալ իրաւունքների ծագելուն, ուրիշին անցնելուն և վերջանալուն, այդ ամենի բնորոշումը պրուում է քաղաքացիական օրէնսդրութեան և կառավարիչ սենատի վճռացինց որոշումների մէջ, որոշումներ, որոնք կայացել են հեղինակի իրաւունքին վերաբերեալ զանազան վիճելի խնդիրների առիթով: Ռուսական օրէնսդրութիւնն անհրաժեշտ է համարում սահմանել հեղինակի իրաւունքի էութիւնը. այսպէս՝ 420 յոդւածի 2-րդ ծանօթութիւնը յացընում է. Գրական և գեղարւեստական երկերի սեպհականութեանը կանոնադրին, նրանց ժամանակներին կամ այն անձնաւորութիւններին, որոնց վրայ է փոխանցւած այդ իրաւունքը առաջինների և երկրորդների կողմից, կոչում է գրական սեպհականութիւն, իսկ

Երաժշգույն աշխատասիրութիւնների վերաբերմամբ սեպհականութեան իրաւունքը—երաժշգույն սեպհականութիւն....

Թէև մի այդպիսի որոշում դժւար թէ կարող լինի լուսաբանել հեղինակի իրաւունքի էութիւնը, սակայն գրական սեպհականութեան առանձին յիշափակութիւնը մասամբ ցոյց է փալիս, որ ոռուսական օրէնսդրութիւնն էլ զանազանում է այն սովորական սեպհականութեան բնաւորութիւնից Բացի այս՝ 420-րդ յօդուածի յաւելւածից (Ճանօթ. 2) երեսում է, որ օրէնքը հեղինակին իրաւունք է փալիս օգուելու իր հեղինակութիւնից, որպէս բարեվասրակ (Յլագոպրօքրետեհայ) ձեռք բերւած գոյքից։ Հեղինակութիւններից և բարեվասրակ ձեռք բերած գոյքից օգուելու իրաւունքի միակերպութեան մասին օրէնքի ցուցումը հետեւանք է ոռուսական օրէնքի հայեցակէրի՝ գոյքերի փեսակների վերաբերմամբ։ Օրէնադրութիւնը զանազանում՝ է տոհմական գոյքը, որ չի կարող կփակի ենթարկել, և բարեվասրակ ձեռք բերւած գոյքը։ Միայն այս վերջինը կարող է իր տիրոջ կողմից անարգել կերպով տրւել մի ուրիշին և ձեռքից ձեռք անցնել վաճառման, կտակի և այլ միջոցներով։

Յիրաւելի, այսպիսի գործողութիւնների մէջ հեղինակութիւններն ու ընդհանրապէս արդար վաստակով ձեռք բերւած գոյքերը նման են միմեանց. բայց միայն այդքան. հեղինակութիւնների հրապարակական անրդից գնելու դէպքում՝ օրէնքը շեղում է բարեվասրակ ձեռք բերւած գոյքերի վերաբերմամբ իր ընդունած կարգից. օրէնքը հեղինակութիւնների գնողին սեպհականագէր չէ ձանաշում, այն ինչ այլ գոյքերի վերաբերութեամբ այդպիսի սահմանափակում գոյութիւն չունի։ Միայն կարելի է այս ասել, որ հեղինակի և բարեվասրակ ձեռք բերւած այլ գոյքի տէրերը համանման են. ինչպէս որ առաջինը կարող է իր այդ փեսակ ցանկութեան համեմատ ազարօրէն վարել իր երկի հետ և ուրիշներին զիջանել, նոյնպէս կարող է վարել գոյքի տէրը։

Վերև արդէն նկարեցինք, որ մի երկի տպագրութիւնն է առաջ բերում գրական սեպհականութեան իրաւունքը հեղինակի կամ նրա ժառանգների համար։ Եւ ոռուսական օրէնսդրութիւնը այդ առիթով մարդնանիշ է անում հեղինակի իրաւունքի էական գէորը՝ սահմանափակելով հեղինակութիւնները տպագրելու և ժամա-

Նակամիջոցը շաւագործելու 420-րդ յօդւածի (ծանօթ. 2) յաւելւածի առաջին կերը հեղինակին տալիս է քացառիկ իրաւունք իր բոլոր կեանքում օգգուելու տպագրութիւնից և նրա վաճառումից իր բարեհայեցողութեան համեմափա: Հեղինակի իրաւունքի էութեան մասին մանրամասն հայեցք գտնում ենք քաղաքացիական րաժնի հետեւալ վճարացինջ որոշման մէջ (=կասազիոնիո թիւպենի 1870 թ. № 788. «Մեր օրէնսդրութեան համաձայն՝ գիտութեան, գրականութեան գեղարեսուների և արւեստների ամեն մի արդադրութիւն տալիս է հեղինակներին զանազան իրաւունքներ թէ անձնական և թէ գոյքի: Անձնական իրաւունքներն են կամ զանազան գեսակ պարզեներ և կամ արտօնութիւններ, որ բրւում են նրան իրեւ հեղինակի. իսկ գոյքի վերաբերեալները նոքա են, որոնք սպարկանում են նոյն անձին, որպէս հեղինակութիւնների սեպհականագրիրոջ: Սրանցից առաջինը ժառանգական չէ և չի կարող գոյութիւն ունենալ հեղինակի մեռնելուց յետոյ: Երկրորդը՝ ընդհակառակը, ինչպէս և ամեն մի գոյքի սեպհականութեան իրաւունք, կարող է անցնել ժառանգներին կամ մի որ և է ուրիշին օրինական սահմանների մէջ:

Այսպէս ուրեմն վճարացինջ որոշումը ընդունում է անձնական պարրի գոյութիւնը հեղինակի իրաւունքի մէջ, երեւի աջն հիման վրայ, որ իրերի բնութեան դէմ կը լիներ, և թէ կարելի համարւէր հեղինակութիւնն իր հեղինակից բղորովին անջագել, ինչպէս անջագում է մի առարկաց իր նախակին տիրոջից և սեպհականութիւնն դառնում մի ուրիշի:

Այսպեղ ի նկատի է առնեում այսպէս կոչւած հեղինակելու արարողութիւնը, որ հեղինակի անձնաւորութիւնից անբաժան է, թէև հեղինակի իրաւունքի տէրերը կարող են փոխւել:

(Վերջը բաջորդ անգամ)